



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԵՎՏՐԱՍԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՊԱԼԱՏ



ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

11. 03. 2022

30.03.2022թ.-ին ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի (ՀՀ ԱԱՊ) և «Էքսպորտ Արմենիա» ասոցիացիայի (ԷԱ) նախաձեռնությամբ կազմակերպված «Արտահանման հնարավորությունները արդի պայմաններում» կլոր սեղան քննարկման արդյունքներն ամփոփելով՝ առանձնացվել են երկու հիմնական ուղերձներ, որոնք արտացոլում են քննարկված հարցերի ամփոփ և ինստիտուցիոնալ լուծման ուղիները:

Արտահանման ոլորտում առկա խնդիրները

1. Տնտեսական դիվանագիտություն

ՀՀ ԱԱՊ-ն և ԷԱ-ն նախաձեռնում են տնտեսական դիվանագիտության զարգացման օրակարգի և ինստիտուցիոնալ շրջանակի ձևավորման գործընթաց: Մասնավորապես, նախատեսվում է ստեղծել շահակիցների հարթակ (պետական և մասնավոր հատվածների միջև), որտեղ կնախաձեռնվի տնտեսական դիվանագիտության շրջանակի և հայեցակարգի ձևավորումը: ՀՀ ԱԱՊ-ն և ԷԱ-ն ակնկալում են համագործակցության ընդլայնում պետական մարմինների հետ, որոնք ներգրավված են տնտեսական դիվանագիտության օրակարգի մշակման և իրականացման գործում: Այս փուլում ՀՀ ԱԱՊ-ն և ԷԱ-ն ակտիվ քննարկումներ և խորհրդակցություններ են նախաձեռնում շահագրգիռ կողմերի հետ, մասնավորապես՝ ՀՀ փոխվարչապետի գրասենյակ, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ ԱԺ և ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպություններ:

2. Միջազգային առևտրի մասնագետների վերապատրաստում

ՀՀ ԱԱՊ-ն և ԷԱ-ն նախաձեռնում են բիզնեսի կարիքների գնահատում և հնարավորությունների վերլուծություն: Այս նախաձեռնությամբ ստեղծվում է երկխոսության հարթակ կրթական հաստատությունների, բիզնեսի և միջազգային կազմակերպությունների միջև՝ ժամանակակից պահանջներին և չափանիշներին համապատասխան մասնագետների վերապատրաստման և կարողությունների զարգացման ծրագիր մշակելու և ներդնելու նպատակով:

Բացի վերոգրյալը, վրոնշյալ քննարկման ընթացքում արտահանմանը վերաբերող բազմաթիվ հարցեր են արծարծվել: Մասնավորապես առանձնացվել են հետևյալ հարցերը՝

- Ալկոհոլային արտադրանքի որոշ տեսակների աշխարհագրական տեղանունների, ծագման նշումների ստեղծման և նույնականացման անհրաժեշտությունը,
- Առանձին ապրանքատեսակների գծով հավատարմագրված լաբորատորիաների առկայության անհրաժեշտությունը,
- Արտահանման կարողություն ունեցող ընկերությունների տվյալների բազայի ստեղծումը և դրա պարբերաբար թարմացումը,
- Տրանսպորտային և լոգիստիկ խնդիրների երկարաժամկետ լուծումների անհրաժեշտությունը,
- Արտահանման խթանմանն ուղղված պետական աջակցության ծրագրերի ոչ բավարար մակարդակը, ինչպես նաև արտահանման աջակցության պետական կառույցի բացակայությունը,
- «Մեկ պատուհան» համակարգի միջոցով ԱՏԳ փաստաթղթերի ձևակերպման թվային հարթակի գործարկումը:

ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ
Երևան, Խանջյան 11, 0010

Հեռ. +374 60 48 49 02
info@armcci.am www.armcci.am